լով Ֆրանսային մի քանի հատուցումներ Փոքրը-Հայաստանում եւ Սրվաղ-Խարբերդ-Կեսարիայի շրջանի եռանկիւնում, համաձայն սրան կցուած քարտէսի:

Նմանապէս կարելի կը լինէր, հաւանաբար, համաձայնուել եւ Պաղեստինի շրջանի հողային փոքրացման՝ մեր շահերի պաշտպանութիւնն այնտեղ սահմանափակելով Սուրբ Վայրերով:

Իսկ ընդհանրապէս ասած, առանց մեր պետական շահերին վնաս հասցնելու, Անգլիայի եւ Ֆրանսայի հետ վարելիք ապագայ բանակցութիւնների միջոցին կարող էինք յայտարարել, որ մենք շահագրգռուած չենք Ամադիա — (Զեղերկ) — իրն Օմար-Տիգրանակերտ-Սամսոն-Մարաշ-Ատանա գծից հարաւ գտնուող վայրերով:

Անգլեֆրանսական նախագծի հետ կապուած բոլոր հարցերի մանրաղննին ու խնամուած ուսումնասիրութիւնը ես ցանկալի կը համարէի յանձնել մի յատուկ խորհրդակցութեան քննութեան նախարարների խորհրդի նախագահի նախագահութեան տակ՝ բաղկացած զինուորական եւ ծովային եւ արտաքին գործոց նախարարութիւնների եւ ձերդ կայսերական մեծութեան Կովկասի փոխարքայի ներկայացուցիչներից». (160–61):

Ցարը հաւանութիւն է տալիս այս ծրագրին եւ հաստատում է յատուկ մի յանձնախումբ վարչապետ Շուխերմերի նախագահութեան ներքոյ: Այս յանձնախումբը քննում է անգլեֆրանսական ծրագիրը եւ պարզում Ռուսաստանի վերջնական տեսակէտը Թիւրքիայից գրաւուելիք հողերի մասին:

* * *

Ճիշդ է ասուած, որ տիրոջակը ուտելիս է բացւում: Ինչքան թիւրքական խնդիրը արծարծւում էր ռուսական շրջաններում, այնքան ռուս վարիչները դառնում էին ագահ:

Այս տեսակէտից չափից աւելի հետաքրքրական է ծովային նախարարի 20 Մարտ |2 Ապրիլ թուղթը՝ ներկայացուած յատուկ խորհրդակցութեան: Այդ թղթի մէջ արձանագրելով, որ պատերազմից յետոյ Սեւ ծովը դառնալու է ռուսական ներքին ծով, նախարարը դժկամակութիւն է յայտնում, որ Իզվոլսկին առաջարկել է բաւականանալ Սեւ ծովի եզերքի դրաւումով մինչեւ Օրտու: Բաջ ծովակալը պահանջում է, որ Սինոպն էլ յանձնուի Ռուսաստանին:

Բնականաբար, այսպիսի լայն ծովափ պաշտպանել կարողանալու համար անհրաժեշտ է եւ բաւական խորերը մտնել՝ դէպի երկրի ներսը, այլապէս ծովեզերեայ նեղ շերտը կը լինի վտանգի տակ:

Այս հանգամանքի վրայ է ուշադրութիւն հրաւիրում գինուորական նախարար Բելայեւը՝ մի առանձին թղթի մէջ պարզելով Ռուսաստանի ռազմագիտական պահանջները: Սա եւս պնդում է Սինոպը գրաւելու անհրաժեշտութեան վրայ եւ յետ է մղում Սազոնովի առարկութիւնը, թէ Սինոպի շրջանում Ֆրանսացիներն ունին երկաթուղային կոնցեսիաներ եւ չեն համաձայնուի, որ այդ շրջանը անցնի Ռուսաստանին: Բելայեւը բացատրում է, որ Ռուսաստանի համար «Ֆրանսացիների ամրացումը Սեւ ծովին կից մի շերտում անհրաժեշտ է ընդունել անրաղձալի, իսկ ապագային, դուցէ, նոյնիսկ եւ վտանգաւոր». (181):

Սազոնովը ամէն կերպ աշխատում է Սինոպի խնդիրը մէջտեղից հանել՝ Ֆրանսացիների հետ բախումներ չունենալու մտահոգութեամբ, բայց քաջամարտիկ ռուս զօրավարի ու ծովակալի ճնշման տակ խոստանում է պաշտպանել Սինոպի պահանջը: Այդ նրան չի յաջողւում. Նիկոլայ Բ. իր Լոնտոնի դեսպան Բենկենդորֆի 17–30 Ապր. մէկ հեռագրի վրայ դնում է հետեւեալ եզրակացութիւնը. «Եթէ մեր բանակին յաջողուի հասնել Սինոպին, այդտեղից էլ պէտք է անցնի մեր սահմանը»: Սազոնովը չտապում է «ամենախոնարհօրէն» զեկուցանել ցարին, թէ նրա եզրակացութիւնը կարող է առաջ բերել դիւանագիտական բարդութիւններ եւ որ անհրաժեշտ է այդ եզրակացութիւնը համարել չեղեալ: Ցարը մակագրում է՝ «լաւ» եւ հարցը համարւում են ըստ ասուած:

Իրրեւ արդիւնք բանակցութիւնների, Ապր. 13–26-ին ռուս ու ֆրանսական կառավարութեանց միջեւ տեղի է ունենում նոտաների փոխանակութիւն, որով ճշդորոշւում են երկու պետութեանց հողային ակնկալութիւն-